

| | | | |
|--|--|--|--|
| | <p>ԱՂՐՈՒԳՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ Հայաստանի ազգային ագրարային համալսարան AGRISCIENCE AND TECHNOLOGY АГРОНАУКА И ТЕХНОЛОГИЯ</p> | <p>Միջազգային գիտական պարբերական ISSN 2579-2822</p> | |
|--|--|--|--|

Կայքէջ՝ anau.am/hy/teghkakagir

ՀՏԴ 330.1(479.25)

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Մ.Է. Սողոմոնյան

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
ms@psrc.am

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

Բանալի բառեր՝
բնական մենաշնորհ, պետություն, կարգավորում, արագացված ամորտիզացիա, ներդրում

Ա Ս Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Հոդվածում վերլուծության է ենթարկվել պետության դերը բնական մենաշնորհների ազդեցության կարգավորման գործում: Ըստ էներգետիկ ոլորտի առանձնահատկությունների՝ կատարվել է շուկայի կարգավորիչ ծախսերի սահմանման մեխանիզմների վերլուծություն:

Առաջարկվում է Հայաստանում կիրառել կարգավորման այնպիսի խթանիչ գործիքակազմ, որը հնարավորություն կտա բնական մենաշնորհի սուբյեկտին ներդրումներ կատարել՝ միաժամանակ ապահովելով սակագների կայունություն:

Նախաբան

Տնտեսական հարաբերությունների անընդհատ փոփոխմանը զուգահեռ փոխվում են նաև պետության գործառույթները: Ըստ տնտեսական բազիսի՝ սեփականության ձևի, ժամանակի ընթացքում ձևափոխվել է նաև պետության դերակատարությունը: Մինչև 18-րդ դարի կեսերը պետության գերակա խնդիրներն են եղել արտաքին թշնամիներից երկրի պաշտպանությունը և երկրում կայունության ապահովումը:

Ա. Սմիթը 1776 թ. հրատարակված «Ժողովուրդների հարստության բնույթի և պատճառների հետազոտություն» աշխատությունում հիմնավորել է շուկայի մասնակիցների ազատ խաղը՝ *մեզ մի խանգարեք (Laissez-faire)* սկզբունքը:

Պետությունը պարտավոր է ապահովել քաղաքացիների կյանքի և սեփականության անվտանգությունը, լուծել բոլոր վեճերը, այն խնդիրները, որոնք քաղաքացին չի կարող ինքնուրույն կարգավորել: Պետության միջամտությունը տնտեսական կյանքին խոչընդոտում է շուկայական

տնտեսավարման արդյունավետությանը (A. Смит, 1962):

18-րդ դարում շուկայական տնտեսությունում ձևավորված ազատ մրցակցության մոդելը պահպանվեց մինչև 19-րդ դարի վերջը և 20-րդ դարի սկիզբը. տնտեսավարումն իրականացվում էր կատարյալ մրցակցային շուկայի կառուցակարգերի միջոցով, պետությանը վերապահվում էր սահմանափակ միջամտություն: 19-րդ դարի վերջում ձևավորվեցին մի շարք մենաշնորհային դիրք ունեցող կարտելներ, սինդիկատներ, տրեստներ, կոնցեռններ, կոնգլոմերատներ, ստեղծվեցին անդրազգային կորպորացիաներ, աստիճանաբար նվազեցին շուկայի հիմնական գործառույթները (գնագոյացում, տեղեկատվություն, կարգավորում և այլն), անհրաժեշտություն առաջացավ վերափոխել տնտեսավարման մեթոդները:

1929-1933 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը ցույց տվեց, որ անհրաժեշտ է փոխել շուկայի կարգավորման մեթոդները և կիրառել պետական միջամտություն:

Նյութը և մեթոդները

Ժամանակակից տնտեսագիտության տեսության համաձայն՝ բնական մենաշնորհի պետական կարգավորումն իրականացվում է ըստ տարածական և ժամանակային սահմանների:

Տարածական սահմաններով որոշվում են առաջադրված նպատակների իրագործման առումով պետական կարգավորման տնտեսական և իրավական գործառնությունները:

Ժամանակային սահմաններով որոշվում են կոնկրետ ժամանակահատվածում բնական մենաշնորհի պետական կարգավորման ինտենսիվությունն ու որակը: Այդ սահմանները ներկայացվում են բնական մենաշնորհի զարգացման փուլերով: Հարկ է նշել՝ որքան զարգացած է մենաշնորհը, այնքան ուժեղ պետք է լինի պետական վերահսկողությունը: Ընդ որում՝ բնական մենաշնորհի պետական կարգավորման ժամանակային սահմանները փոփոխվում են ոչ միայն բնական մենաշնորհի որակական վիճակի փոփոխությունների ընթացքում, այլև տնտեսության առավել բարդ ժամանակահատվածներում:

Արդյունքները և վերլուծությունը

Ներկայումս, առանց պետական համապատասխան քաղաքականության, հնարավոր չէ պատկերացնել հասարակական համակարգի կանխատեսելի և կայուն զարգացումը (H. Азаркин, 2000): Ուստի կամ պետություն, կամ շուկա հակամարտությունը փոխարինվեց և պետություն, և շուկա համագործակցությամբ. ընդունված խառը տնտեսական համակարգի մոդելի համաձայն՝ տնտեսական հիմնախնդիրների լուծումն ու կարգավորման գործառնություններն իրականացվում են պետության և շուկայի միջև աշխատանքի բաժանման սկզբունքով: Դրանց համակարգված գործունեությամբ փոփոխության են ենթարկվում նաև շուկայի և պետական կարգավորող մարմնի գործառնությունները:

Կարևորագույն խնդիրների արդյունավետ լուծման առումով պետության համար բարդ է կառուցողական մեխանիզմ ընտրելը, որովհետև, բացի կարգավորիչ գործառնություններ իրականացնելուց, պետք է նաև կառավարի իր իսկ սեփականություն, բնական կամ պետական մենաշնորհային դիրք ունեցող, շուկայի մասնակից հանդիսացող պետական ձեռնարկությունները: Օրինակ՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն, որպես միջուկային վառելիքով աշխատող կայան, Հայաստանում գործող օրենսդրության համաձայն՝ պետական մենաշնորհային դիրք ունեցող ընկերություն է, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն, որպես Հայաստանում էլեկտրաէներգիայի միակ հաղորդող՝ բնական մենաշնորհ: Ուստի պահանջվում է բնական մենաշնորհների շուկայում հստակ տարանջատել պետական կառավարման և պետական կարգավորման


գործառնությունները: Հարկ է նշել, որ 2001 թ. ընդունված «Էներգետիկայի մասին» և 2004 թ. ընդունված «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքների համաձայն՝ հստակ տարանջատվել են վերը նշված պետական կառավարման և պետական կարգավորման գործառնությունները: Արդյունքում հանրային ծառայությունների (բնական կամ պետական մենաշնորհի) ոլորտում ստեղծվել է պետական կարգավորում իրականացնող մարմին:

Քանի որ պետությունը հանրային ծառայությունների ոլորտի մասնակից է, չի կարող ինքն իրեն կառավարել, համապատասխան կարգավորումներ իրականացնել, ինչպես նաև այդ ոլորտում սահմանել մշտապես հավասարակշռված խաղի կանոններ: Պետք է հաշվի առնել, որ մեծ է գայթակղությունը յուրաքանչյուր քաղաքական իրադարձության, օրինակ՝ համապետական ընտրությունների ժամանակ: Այսպես՝ հնարավոր է, որ պետությունն իր սեփական ընկերություններում կնվազեցնի որոշակի ծախսեր կամ շահութաբերության նորման՝ զսպելով սպառողներին վաճառվող էլեկտրաէներգիայի սակագների՝ այլ գործոններով պայմանավորված աճը կամ սպառողներին (ընտրողներին) գոհացնելու համար ժամանակավորապես կնվազեցնի գործող սակագները: Դա բնորոշ է աշխարհի գրեթե բոլոր երկրներին: Մյուս կողմից, սպառողների շահերը պաշտպանելու նպատակով, պետական կարգավորող մարմինը կարող է շուկայի մասնավոր կապիտալի հիման վրա գործող այլ մասնակիցների համար սահմանել այնպիսի կանոններ, որոնք նույնպես թույլ կտան որոշակի ժամանակավոր արդյունք ապահովել սպառողների համար, սակայն տնտեսական կամ իրավական առումով կապակայունացնեն շուկան: Օրինակ՝ սահմանել նվազագույն սակագներ, միաժամանակ իրավական ակտերով ամրագրել, որ դրա հետևանքով առաջացած վնասները մասնավոր և պետական ընկերություններին կփոխհատուցվեն հետագա տարիներին կամ կհաշվացվեն, ինչն ավելի վտանգավոր է:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ բնական մենաշնորհների շուկայի մասնակիցները, ըստ էության, կազմավորվում են երեք «խոշորացված» սուբյեկտների մասնակցությամբ՝

- պետություն՝ իր իսկ հիմնադրած ընկերություններով,
- մասնավոր կապիտալով հիմնադրված ընկերություններ,
- սպառողներ:

Հետևաբար բնական մենաշնորհների շուկայի յուրաքանչյուր մասնակից, ըստ վերը նշվածի, չի կարող լինել և կառավարիչ, և կարգավորող: Ուստի պետական կարգավորող անկախ մարմնի ստեղծումը բնական մենաշնորհների շուկայի կարգավորման միակ լուծումն է: Տվյալ մարմնի հիմնադիր պետք է լինեն շուկայի բոլոր մասնակիցները՝ պետությունը (Ազգային ժողով և Կառավարություն), շուկայում գործունեություն իրականացնող ընկերությունները և սպառողները, որոնց կողմից



Պետական կարգավորող մարմնի հիմնական գործառնությունը (կազմվել է հեղինակի կողմից):

սահմանվում է կարգավորող մարմնի հիմնական գործառնությունը՝ շուկայի մասնակիցների շահերի հավասարակշռումը: Չափազանցական գործառնությունը «պայմանավորվում են» նաև չափազանցական պետական կարգավորող մարմնի գործունեությանը՝ պայմանով, որ այդ մարմինն օրենքով սահմանված իր միակ՝ համահիմնադիրների շահերի հավասարակշռման գործառնությունը պարտավոր է բոլոր կողմերի համար իրականացնել որքան հնարավոր է թափանցիկ: Ուստի մինչ օրս Չափազանցական ձևավորված հասարակական այն ընկալումը, որ պետական կարգավորող մարմինը պետք է միայն պաշտպանի սպառողների շահերը, հիմնավորված է:

Պետական կարգավորող մարմնի հիմնական գործառնությունը ներկայացված է գծապատկեր 1-ում:

Պետական կարգավորման վրա ազդում է նաև գիտատեխնիկական առաջադիմությունը, որը կարող է փոփոխել ոչ միայն կարգավորման ռազմավարական սահմանները, այլև բնական մենաշնորհի կարգավիճակը: Չափազանցական ենթադրվում է ձևավորել կարգավորման երկու հակադիր սահման: Առաջին դեպքում բացարձակ օրինական սեփականության իրավունքով, լիովին ինքնուրույն գործող տնտեսությունը ձգտում է բնական մենաշնորհի կարգավիճակի: Երկրորդ դեպքում պետությունը ձգտում է սահմանափակել բնական մենաշնորհի տնտեսական ազատությունը (մենաշնորհի գնի սահմանում, մատուցվող ծառայության և արտադրության ծավալի սահմանափակում) և կանխել այդ ազա-

տության տնտեսական, սոցիալական ու քաղաքական հետևանքները: Միևնույն ժամանակ շուկայական տնտեսության պայմաններում պետության հիմնական նպատակը բնական մենաշնորհի նկատմամբ լիակատար և համակողմանի վերահսկողություն իրականացնելն է: Չարկ է նշել, որ դա հնարավոր է այն դեպքում, երբ շուկայի բոլոր մասնակիցների շահերը համընկնում են կամ բնական մենաշնորհը թույլ ընկերություն է: Օրինակ՝ ԱՄՆ-ի երկաթուղային ցանցը որոշ դեպքերում աշխատում է վնասով, լիովին վերահսկվում է և վնասի չափով սուբսիդավորվում պետության կողմից (Railway Reform in the Central and Eastern Economiks, World Bank Policy Research Working Papers, 1993):

Շատ դեպքերում կարգավորող մարմնի կողմից վերահսկողության ուժեղացումը կարող է հանգեցնել հակազդեցության. հավանական է, որ կգործի շահերի համաձայնեցման կառուցակարգը:

Այսպիսով՝ կիրառվող կարգավորման մեխանիզմները, ըստ Էներգետիկայի ոլորտի ընդհանուր առանձնահատկությունների (տեխնոլոգիական ցիկլ, միասնական կարգավորման անհրաժեշտություն, հաղորդման և բաշխման ցանցերի բնական մենաշնորհ), տվյալ երկրին բնորոշ սահմանափակումների (բնական ռեսուրսների առկայություն, դիվերսիֆիկացված լինելու հանգամանք և հնարավորություններ, փոքր երկրներում նաև մրցակցությամբ պայմանավորված սահմանափակումներ), զարգացվածության աստիճանի (երկրի ընդհանուր և ոլորտային ռիսկերի մակարդակ), բաժանվում են երկու հիմնական խմբի՝

- ծախսերի որոշման մեխանիզմներ (cost based),
- շուկայական մեխանիզմներ (market based):

Ներկայումս Չայաստանում Էներգետիկայի ոլորտի կարգավորումն իրականացվում է ծախսերի որոշման մեխանիզմներով, ինչը ենթադրում է սպառողների մատուցվող ծառայությունների արժեքի (cost of service), այն է՝ ոլորտում գործող ընկերությունների անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը կարգավորման յուրաքանչյուր ցիկլում ամբողջությամբ փոխհատուցելու նպատակով սակագների որոշում: Չարկ է նշել, որ 2018 թ. հուլիսի 1-ից «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները կատարվել են ծախսերի որոշման մեխանիզմներից շուկայական մեխանիզմների աստիճանական անցումն ապահովելու նպատակով:

Ծախսերի որոշման մեխանիզմները ներառում են կարգավորման տարբեր՝ շահույթի դրույքի սահմանային մակարդակի (rate of return regulation), սահմանային հասույթի մակարդակի (revenue cap regulation) և սահմանային սակագնի մակարդակի (price cap regulation) մեթոդներ: Չայաստանում, ըստ ընկերությունների գործունեության առանձնահատկությունների, կիրառվում են նշված բոլոր մեթոդները:

Ծախսերի որոշման մեխանիզմների կիրառման ժամանակ սակագների կարգավորման, ինչպես նաև ներդրումների խթանման նոր մեթոդ է կարգավորման խթանիչ գործիքակազմը (incentive-based mechanisms), որի միջոցով արդյունավետության առավել բարձր մակարդակ ապահովելու նպատակով միջինացվում է ընկերությունների ծախսերի մակարդակը և օպտիմալ ցուցանիշների հասնելու ակնկալիքով որոշակի պայմաններով ֆիքսվում կարգավորման ավելի երկար ցիկլի համար: Այդպիսի ցուցանիշներ կարող են լինել ընթացիկ ծախսերը, կանխատեսվող ներդրումները, կորուստները, հավաքագրումները և այլն: Իսկ ընկերությունների համար օպտիմալացում կատարելու խթանը կարգավորման ընտրված ցիկլի ընթացքում (ցանկալի է կարճ ժամանակահատվածում) լրացուցիչ եկամուտներ ստանալու հնարավորությունն է:

Որպես կարգավորման խթանիչ գործիքակազմի կիրառման օրինակ՝ ստորև ներկայացվում են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ծախսերի և կորուստների կրճատման ուղղությամբ ձեռնարկված համապատասխան միջոցառումները: Հանձնաժողովի 2016 թ. ապրիլի 29-ի N 98Ա որոշմամբ, սակագնային մարժայի հաշվարկման մեթոդներում կատարված համապատասխան փոփոխությունների համաձայն, սկսած 2016 թվականից, 5-ամյա ժամանակահատվածի համար բաշխիչ ցանցում, որպես հաստատուն մեծություն, էլեկտրաէներգիայի կորուստները սահմանվել են 11,03 %: Նշված մեծությունը հաշվարկվել է 2015 թ. ապրիլի 1-ից մինչև 2016 թ. ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում բաշխիչ ցանցում էլեկտրաէներգիայի կորուստների տվյալների հիման վրա. հիմք է ընդունվել սակագնային մարժայի հաշվարկման մեթոդիկան: Նշված ժամանակահատվածում բաշխիչ ցանցում էլեկտրաէներգիայի փաստացի կորուստները կազմել են 11,03 %:


Հետագայում, հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից իրականացվող մեծածավալ ներդրումային ծրագրերը, ծախսերի և կորուստների կրճատման խրախուսիչ մեխանիզմը որոշակիորեն կատարելագործվել է և հանձնաժողովի 2017 թ. նոյեմբերի 15-ի N 490Ա որոշմամբ սակագնային մարժայի հաշվարկման մեթոդիկայով սահմանվել է, որ, սկսած 2016 թվականից, 5-ամյա ժամանակահատվածի համար սակագնի հաշվարկներում էլեկտրաէներգիայի կորուստները կմնան անփոփոխ՝ 2021 թ. հաշվարկներում կազմելով 7,5 %-ից ոչ ավելի, և ևս 4 տարի մնալով անփոփոխ՝ 2025 թ. հաշվարկներում կկազմեն 7 %-ից ոչ ավելի, ևս 3 տարի անփոփոխ մնալուց հետո 2028 թ. ու հետագա տարիների հաշվարկներում կկազմեն 6,4 %-ից ոչ ավելի:

Այսպիսով՝ կորուստների կրճատման նպատակով իրականացված խթանիչ քաղաքականության արդյունքում,

սկսած 2016 թվականից, բաշխիչ ցանցում էլեկտրաէներգիայի փաստացի կորուստներն աստիճանաբար նվազել են. 2016 թ. կազմել են 9,9 %, 2017-ին՝ 8,8 %, 2018 թ. 1-ին եռամսյակում՝ 8 %: Առաջիկա տարիներին ակնկալվող արդյունքը կարտացոլվի 2021 թ. վերանայվող սակագների հաշվարկներում, ինչը դրականորեն կանդրադառնա սպառողների վրա: Բացի այդ՝ ծախսերի և կորուստների կրճատման խրախուսիչ մեխանիզմի արդյունավետության նպատակով, ինչպես նաև սպառողների շահերը հաշվի առնելով, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն 2016-2027 թթ. նախատեսում է իրականացնել մեծածավալ ներդրումային ծրագիր, որը հնարավորություն կտա 2028 թ. ունենալ զրեթե ամբողջությամբ արդիականացված, տեխնիկական ամենաբարձր չափանիշներին համապատասխանող էլեկտրաէներգիայի բաշխիչ ցանցեր, կրճատել ընկերության շահագործման և պահպանման ծախսերն ու էլեկտրաէներգիայի կորուստները (տոկոսային արտահայտությամբ): Առնվազն 1660 մարդով կկրճատվի աշխատակազմը, կրկնակի անգամ՝ նորոգման և նյութական ծախսերը, մոտ 20 %-ով՝ մյուս ծախսերը: Բաշխիչ ցանցում էլեկտրաէներգիայի կորուստները գործող սակագների հաշվարկներում նախատեսված 11,03 %-ից կնվազեն և 2028 թ. սակագների հաշվարկում կկազմեն առավելագույնը 6,4 %:

Կարգավորման խթանիչ գործիքակազմի կիրառումը գրաֆիկորեն ներկայացված է գծապատկեր 2-ում:

Հարկ է նշել, որ բնական մենաշնորհի պետական կարգավորման համակարգի կայացման և կատարելագործման հարցում կարևորվում են պետական կարգավորման ռազմավարության, սկզբունքների ու մեթոդների հստակեցումը, սպառողների համար բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների մատչելիության ապահովումը:



Գծ. 2. Կարգավորման խթանիչ գործիքակազմի գրաֆիկական պատկերը (կազմվել է հեղինակի կողմից):

Եզրակացություն

Այսպիսով՝ պետական մարմնի կողմից իրականացվող կարգավորման սահմանների ձևավորման գործընթացն անընդհատ է: Ըստ պետություն-բնական մենաշնորհի մոդելի՝ պետական շահերը միշտ էլ վեր են դասվում մենաշնորհի շահերից:

Կարգավորման խթանիչ գործիքակազմի ներկայացված մեթոդը կխթանի բնական մենաշնորհի սուբյեկտի ներդրումների իրականացումը, ինչպես նաև կհաստատի սակագների կայունություն:

Բնական մենաշնորհի պետական կարգավորումը կնպաստի բնական մենաշնորհի և հասարակության միջև դիտարկվող հակասությունների վերացմանը, շուկայում ներդրումների ավելացմանը, սպառողի և տնտեսավարողի շահերի հավասարակշռմանը, բնական մենաշնորհի հանդիսացող ոլորտներում նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը և կարգավորող մարմնի կողմից մասնագիտական ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը:

Գրականություն

1. Բաղդասարյան Յ. Բնական մենաշնորհների պետական կարգավորման հիմնախնդիրները և դրանց լուծման մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում: Տնտեսության զարգացման և կառավարման հիմնախնդիրներ: Տնտեսության և կառավարման ինստիտուտ. - Գիրք 8. - Եր.: Օր-Դար, 2015. - Էջ 299-300:
2. Смит А. Исследование о природе и причинах богатства народов. - М., 1962. - С. 53.
3. Азаркин Н. Национальная идеология и культурно-воспитательная функция государства // Власть. - М., 2000. - С. 37.
4. Railway Reform in the Central and Eastern Economics, World Bank Policy Research Working Papers, 1993, - p. 264.

АННОТАЦИЯ

Участие государства в процессе регулирования естественных монополий

В статье анализируется роль государства в регулировании деятельности естественных монополий. Автор, исходя из особенностей энергетической сферы, анализирует применяемые в этой сфере рыночные механизмы определения регулирующих расходов и предлагает применять в Республике Армения инструменты стимулирующего регулирования, которое даст возможность стимулировать субъектов естественной монополии делать инвестиции и в то же время - обеспечить стабильность в плане воздействия этого процесса на тарифы.

ABSTRACT

State Participation in the Process of the Natural Monopoly Settlement

The article discusses the role of the state in regulating the activity of natural monopolies. Based on the peculiarities of the energy sector, we have analyzed market mechanisms for determining regulatory expenditures in this sphere. It is suggested to apply such incentive regulation tools in the Republic of Armenia that will enable to stimulate a natural monopoly entity to invest and at the same time to ensure stability in terms of effects on tariffs.

Ընդունվել է՝ 05.03.2019 թ.
Գրախոսվել է՝ 23.05.2019 թ.